ՆՈՐ-ԴԱՐ

№ 44 ՏԱՄՆԵԻԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ արաթ 9 Մարտի — 1896 — Հ արաթ 9 Մարտի ՏԱՄՆԵԻԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 44

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ուրբաթ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների գինը 2 կ., թիւկամների համար կրկնապատիկ

Թիֆլիսի նախկին բազաթաղլար հանդուցեալ
ՊՕՂՈՍ ԱԼԷՔՍ. ԻԶՄԱՅԻԼԵԱՆԻ
յիշատակը յաւերժացնելու համար կազմուած յանձնաժողովի և բազարային վարչութեան միացեալ տեսակը սրանով յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ կիրակի, այն մարտի 10-ին, Վանքի ուսուց եկեղեցում պատարագ կը մատուցուի, որից յետոյ հանդուցեալի գերեզմանի վրայ, եկեղեցու բակում, հոգեհանգիստ կը կատարուի։ Պատարագը կը կսկսուի օրուայ ժամը 10-ին, հոգեհանգիստը 12-ին։
(421) 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Պիւրեղ եպիսկոպոսի յիշատակին։
Տխուր փաստեր։
Արհեստ է մեղ հարկաւոր։
Քրոնիկոն.—Ս. Էջմիածնից։ Իզմայիլեանի հոգեհանգիստը։ Ալէքսանդրապոլից։ Փորձնական կայարաններ։ Երեք րուբլիանոցի վերացումն։ Գէորգեանի սպանման գործի կալուածը վիայ։ Մեսրոպեանի չրջանառութիւնը։ Մեծ Զանգեզուրից։ Չինուորագրութեան հաշիւ։ Թիֆլիսեան Օհանեանի գերեզման։ Բժիշկների փոխ. օգն. ընկ.։
Գարբիել եպիսկոպոս Քէլեաճէ։
Թղթակցութիւններ. — Նամակ Թիւրքիայից—Կ. Պոլիս։ Նամակ Պարսկաստանից—Թաւրիզ։
Հայաքակոն. — Թիւրքիա։ Եւրոպիական դաշնակցութիւն։ Սպանիա և Միացեալ-Նահանգներ։ Իտալիա։
Խառն լուրեր։
Հեռագրներ.
Բանասիրական.—Մեր գիւղացիների կեանքը։
Տիգիկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 8 մարտի 1896 թ.։

ՊԻՒՐԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Բոլորից տարին պատուր օրուայ. 1895-ի մարտի 8-ի (երեկոյեան) միջօրէոյի վերջին ճառագայթների հետ յաւիտեանս իր մտաբը լոեց նահատից ընտիր եկեղեցականի տրիբ, որ հայ եկեղեցու պատիւն էր լուսաւորում, որ սիրած հօտի սուրբ արեան չերմութիւն էր տալիս։ Յաջորդ օրը—ինչպէս չտես—մռայլ ու հիւծուի պէս արտասուող երկինքի տակ ս. Խաչ վանքի (Նոր-Նախիջեանի մօտ) գանգակատան հիւսիսային կողմը, մինչդեռ պերեզմանափորներն ընտիր եկեղեցականի համար վերջին բնակարանն էին պատրաստում, փակուած ու կրնրուած գագաթի շուրջը խուռ հասարակութիւնը էին լուսում մի խումբ բարեկամների վշտաբեկ կրծրիից. խորին լռութիւնը խանգարում էին ատրմանները, որ մրմնջում էին միրանի կրօնաւորները։

Միրանի բոլէ և մեծատոհմի ծոցում կարելի էր մի հոգալուր տեսնել, որ ամփոփում էր իր մէջ Պիւրեղ եպիսկոպոսի վաստակաշատ տարիները։

Արծաթի տիրապետութեան այս ժամանակում Պիւրեղ եպիսկոպոսը իր խօսքով ու կեանքով անլուռ բոլոր էր անիրաւութեամբ լի հարբերութեան դէմ։ Նրա՝ եկեղեցականներին վայել ձեռքը կաշառքով երբէք չտարաուսրեց։ Նրա կեանքը նախատինք էր լիներատութեան ատպանում նոր մերաուածների համար։ Երբ ընտիր եկեղեցական՝ սիրում էր հոգուով տպօրել իր ամենօրեայ ձեռնարկութեան սկզբին և վախճանին։ Երբ ողորմած հայր, Ղեսպոտ լինելով հանդերձ, Սամարացու գերն էր ընտրել։

Նրա ընդմիշտ պատուճանից զուրկ տեղեր վրայ չէր կարելի նրան մինակ տեսնել. Նրա ընտիր տեղատակիցներն այնպիսի մարդիկ էին մեծ մասամբ, որոնք փոխարէքաշելով գիւղը, նրա չրջապատող հողատէն անտառներում կամ այգիներում, քաջքան վեհափնների ափերին կամ սառն ապրիւրների գլխին նստած՝ լաւ քէֆ ու զուարճ վայելել են քաղաքից իրենց հետ տարած առատ պաշարը, թիֆիհանների, ղէչնների հանից վարելով՝ ձկնորսութեամբ կամ թռչնորսութեամբ ժամանակը տպանել և կլուբների, «վիչել»-ների, պարերի, թատրոնի ու պէս-պէս զուարճութեանց տեղնը ընկնելուց վերադարձել քաղաք և այս ու այն չրջանում գովել գիւղական կեանքը, առանց այդ կեանքի վարագոյրի ծայրն անգամ բացած ու նայած լինելու։

Ձիշտ է, գիւղական կեանքն ունի իւր դրուիչ կողմերը—չատ տեղ գեռ մնացել են պարզութիւն, միմամութիւն նահապետական նիստ ու կաց, գեղեցիկ սովորութիւններ։ Չատերը ունին մաքուր օդ, գետ ու գետակ առուներակ ապրիւրներ, անտառ, հովիտ, մարզ ու արօտ, ալեծածան արտեր, մրգարեր այգիներ, բանջարանոցներ, նախիր, հօտ, մեղու, շերամ, հազար ու մի բարիք՝ լուսնակ գիշերները, սոխակի գայլայլիկ, թռչնոց ճուռուիւն թիֆհանների թռիչք և այլն, և այլն, որոնք վտհատրում են մեզ մի երանական աշխարհ, ուր մարդիկ պէտք է որ երջանիկ գգային իրենց։ Սակայն այդ գրամի մի կողմն է, չատ աւելք միւս երեսը, մտիկ քննեցէք գիւղը և գիւղական կեանքը, և ձեզ ուրիշ պատկեր կընկերկայանայ։

Արդարև, մեզք որ գիւղը ուզում էք, և զուր կը տեսնէք ամենից առաջ, որ մեր, գիւղերը քիչ բացատութեամբ, ամենքն էլ շինուած են ապերի լանջերին, քարափների գլխին, ժայռատ անմատչելի տեղերում կամ ձորամէջերում։ Տները անկարգ, անհամոն ընկած են, մարդատային բնակութեան անյարմար, չատ տեղ գետնափոր, մարդ ու անասուն տուն ու ճիւ միևնոյն չէնքի մէջ կողք կողքի ապրելիս։ Փողոցներն նեղ, ծուռ ու մուռ, աղբակոյտերով լիքը, անձրև կամ ձիւն ժամանակ ցեխին ու լեղը լցացած, գաշչահոտութիւնն ամեն տեղ տիրապետում, հիւանդութիւններն անպակաս։

Դիւղացիք ապէտ, նախապաշարուած, անուսումնասէր, զրկած, չինգալ փոլչի մեծ գեր խաղալիս։ չունին գաղտց, ար ժամանակ քահանայ, չեն տեսնում մի բարի օրինակ, չեն լսում մի օգտակար խրատ. ծեր, այրի, որբ, հիւանդ, աղքատ անխնամ, բաղդի բերմանքին թողնուած։

Չատերը մի կտոր հող ունին, գործիք, լծկան եզ ու գամէշ չունին, չատերը լծկան ունին, հոդ չունին. ճնշւում են հարկերի տակ, պարտքերի տակ, կամայականոց քաղաքացի վաչխատաւորների ձեռքն են ընկնում նրանց չարժական ու անչարժ կալքը. գիր, օրէնք չիմանալով տուժում են մեկին տասնապատիկ, անժամանակ կոռուբեկտառը իրենց վարուցանքից, հունձից ձգելով, չատ անգամ գրկւում են տարուայ մսխից։ Չարութիւնը, նախանձը, թշնամութիւնը բուն գրած՝ մեկի տրան է հրդեհւում, միւսը խոտի դէզը, երբորդի մարգը, չորրորդի այգու ծառերը կարատւում, տաւարն ու ձին գողացւում, կամ ժայռից ցած գլորւում։ Գրի վէճ, հոգի վէճ, կռիւ, թակ, մահակ, արիւնհեղութիւն անվախան են, և այդ բոլորը մի կտոր հացի համար, որ կարողանան իրենց պահել, իրենց ընտանիքն ապրեցնել։

Իսկ այդ հացը չատ հեշտութեամբ չի ձեռք բերւում. հետեւեցէք գիւղացու պաշտային պարագմունքներին և կրտունէք, թէ ինչ տաժանելի աշխատութիւն է գործ գրւում. դեռ կէս գիշերին արթնանալով պիտի կերակրէ իր անասուններին, տակները սրբէ, թխմրէ, ջրէ, լուսը չբացուած հանդումը լինի, ամբողջ օրը մաճը ձեռին վարն անէ, հողի հետ կռիւ տայ, լինի այդ աշնանը, ձմեռը, թէ գարնանը, ցուրտ լինի թէ տաք, անձրև թէ փոթորիկ ու սառնամանիք—միևնոյն է նրա համար. վարից յետոյ պիտի սերմը ձգէ, ցաքանէ, ջրովի տեղերում ցանքերը ջրէ. քաղհանէ, հնձի ժամանակ այրող արեի տակ քրտինքը ծլծլալով, չապիկը մէջքին կը-

Վրիպակ. «Նոր-Դար»-ի նախընթաց (43) համարի առաջնորդողում լոյս է տեսել «Այդ թերութիւնը ծածկել կարելի չէ ոչ խորհրդի և ոչ բնաւորութիւնն աղօղեցնելու համար..» պէտք է կարդալ. «Այդ թերութիւնը ծածկել կարելի չէ ոչ խաթրի և ոչ բնաւորութիւնն աղօղեցնելու համար»։

ՏԽՈՒՐ ՓԱՍՏԵՐ

Մարտի ։-ի Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ընդհանուր ժողովը կարող է պատճառականը համարուել ուրիշ համանման ժողովների, որ ժամանակ առ ժամանակ գանազան պատճառներով քաղաքներում տեղի են ունենում հասարակական գանազան հարցեր լուծելու նպատակով։

Ինչ որ այս ժողովի մասին ասելու լինինք, բան ինքնան, համեմատական չափով հետաքրքրել պիտի լինի և ուրիշ համանման ժողովների մասին։

Բարեգործական Ընկերութիւնն ընդհանուր ժողովը նշանաւոր է միչա նրանով, որ նրա անդամների չարքում կարելի է տեսնել և այնպիսիների, որոնք իրենց ուսումը վերջացրել են բարձրագոյն պղտոյնների և այնպիսիների՝ որոնք – գանազան խանութներում։ Այստեղ կը տեսնէք իրար կողքի նստած «հասարակական գործիչներ», խմբագրներ, հեղինակներ, գանազան թերթերի աշխատակիցներ, փաստաբաններ, բժիշկներ, յայտնի գրամատէրեր,—ամէ ես ասում, որ այստեղ չգանես։

Արդէն ժողովի կազմութիւնն ինքը, տեսքը մի եկեղեցական էր, որ տանից կամբիւլ կարդ էր ասել. «Ես եմ տալիս քսջ, տալիս քսջ պանձն իւր պիտ, ի վերայ աշխարհս»։

Չկայ այլևս մեր քսջ տալիքը, մեր սակաւագրքին գաշտի մէջ վազաժամ լսուածից այն ծագիկը, որի անույշ բոյրը գգում ենք գեռ և պիտի գգանք, քանի Պիւրեղի հոգու ընտիր չնորհները չեն կամիլ և տրիչների վրայ։

Մի տարի բոլորելուց յետոյ, յաւտան սրտից կրգաչինք. «Փոխս մարդ, որ կորար։

«Բարձաւ տրտմարն, խաղաղութեամբ եղեցի գերեզմանն նորա»։

ԾՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԵՐ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԸ

I.

Մեզանում գիւղական ժողովրդի կեանքը, նրա անասնական գրութիւնը չատ քիչ է ուսումնասիրուած և նրանք, որ երբեմն ժամանակ չեն չփուել այդ բազմի բերմունքին թողնուած գաստակարգի հետ, չատ ծուռ գաղափար ունին կազմած։ Չատերը գիւղական կեանք ասելով հասկանում են, որ գիւղը մի այնպիսի անկիւն է, ուր մարդիկ ոչ միայն հանգիստ վիճակ ունին, աշխատելս խելք ու չահից հեռի են, այլև չրջապատուած լինելով բնութեան գեղեցկութիւններով՝ վայելում են հոգեր ու մի բարիքներ, որոնցից զուրկ է քաղաքացին։ Այդ ծուռ գաղափարը, որ կազմուել է առհասարակ գիւղական կեանքի մասին, հետևանք է այն բանի, որ քաղաքային կեանքից գրուած, նրա գուարճութիւններով յրդփացած անձերը ամեռը մերձի օրով

Այդ մարդիկն այնքան խորը մտան ֆրազների աշխարհը, որ սկսեցին այսպիսի մի անհեթեթ միտք արծարծել [illegible] որովհետև հանգուցեալ Ներսէս պատրիարքը Ընկերութեան պատուաւոր անդամ է, ուստի անյարմար է Մելիք-Հայկազեանցի սէնին ընտրել։

Որ այդ տեսակ խօսողների գլուխը չլիմունքներից խարտ չունէր, երեւում էր նրանից, որ ասածները յետոյ չէին կարողանում ապացուցանել։

Արդարև, երեխայութիւն է այդ տեսակ խօսքեր ասելը։ Առաջին՝ Ներսէս պատրիարքը Բարեգործական Ընկերութեանն իսկապէս, համաձայն կանոնադրութեան, ոչինչ «—ից» ծառայութիւն չի մատուցել. հետեւապէս այն ժամանակուայ ժողովի անդամները հակառակ են գնացել կանոնադրութեանը, և այդ հասկանալի է՝— ժամանակն ինքն էր արամադրում։

Այդ ժամանակ ամբողջ ազգն ապրում էր. «...Մեր եպիսկոպոսների մէջ մի հատիկ ես, Ներսէս...», և ժողովը բնազդմամբ չէր կարող չհամագործակցել Ներսէսի անունը, ինչպէս և արել է։

Ինչպէս տեսնում են երբորդ կարգի ճառախօսները, Ներսէսը միայն իւր անունն է տուել Ընկերութեանը, այն ինչ Մելիք-Հայկազեանը՝ մի չորք գործ։

Երկրորդ՝ եթէ Ներսէս պատրիարքը պատուաւոր անդամ է Ընկերութեան, դրանից մի՞թէ կարելի է հետեւեցնել թէ Մելիք-Հայկազեանի պէսը չի կարող նոյնը լինել։ Ինչո՞։ Ի՞նչ հիման վրայ։ Այդ դէպքում ինչն էք իրար հետ համեմատում—գործը, թէ մարդը։ Այստեղ դրծի համեմատութիւն կայ և ոչ թէ մարդի, և այդ շատ լաւ գիտէին երբորդ կարգի ճառախօսները, բայց էլի ճառամարանում էին։

Մելիք-Հայկազեանին անձամբ չենք ճանաչում, բայց գործերից ճանաչելիք։ Իմացանք, որ դա գիւտ է մեր [illegible] «գործողների» համեմատութեամբ. իմացանք, որ այդ մարդը գործել է իրական և ոչ թէ բառերի աշխարհում։

Եւ այդ տեսակ հազուագիւտ գործողին չէին ուզում Ընկերութեան պատուաւոր անդամ ընտրել այն տեսակ մարդիկ, որոնց բարեգործութիւնը բառերով է արտայայտւում։

Չգիտենք ինչ կարիք կար այդքան տակից-վրայից խօսել։ Այդ մարդիկ կամ պիտի հեղբէին վարձատրութեան սկըզբունքը, ասելով՝ ոչ աքի չի կարելի վարձատրել, որովհետև ով հասարակութեան օգտին մի բան է անում, միայն իւր պարտքն է կատարում, և կամ պիտի չասէին պատուաւոր անդամ ընտրել Մելիք-Հայկազեանին, որովհետև այդ մարդը շատ չատերի այժից վեր ծառայութիւն է մատուցել Ընկերութեանը, նա՞մանաւանդ, եթէ աչքի առաջ ունենանք նրա գիւրքը, չլսապատող հանգամանքները...

Պարոններ, եթէ այդպէս բարձրից կախել պիտէք վարձատրութիւնը, ինչո՞ւ ապա տասն անգամ չնորհակալութիւն էք անում նրան, ով ձեզ մի քանի կապկի էշ է տալիս։ Մի լոպէ հայ հասարակութեան գործը նեղութիւն կրեցէք ձեզը համարել, չանք արէք սրտով մօտենալ նրան և ոչ չլմունքներով,— այն ժամանակ, հաւատացած եմ, Մելիք-Հայկազեանի գործերը բարձր դիր կըստանան և ձեր աչքում։

Դուք նրա համար էք թեթև աչքով նայում Մելիք-Հայկազեանի ծառայութեան վրայ, որ գործն անկեղծ չէք սիրում, գործը ձեր սրտին մօտ չէք ընդունում։

Այդ է գաղտնիքը և ոչ թէ այն՝ բաւարար է արդեօք Մելիք-Հայկազեանի արած ծառայութիւնը պատուաւոր անդամի տիտղոս ստանալու համար։

Այժմեան փարիսեցիների վերաբերութեամբ, որոնք «բեհեզնս ծանուն դնեն ի վերայ մարդկան և մատամբք իւրեանց ոչ կամին չարժել», Մելիք-Հայկազեանի ծառայութիւնը ոչ միայն բաւարար է, այլ և անց է։

Այլ է մեր անհատական կարծիքը։

Եթէ ես լինէի Մելիք-Հայկազեանի տեղ, շատ կընեղանայի այն մարդկանցից, որոնք նրան պատուաւոր անդամութեան են առաջարկել։

Ի՞նչ է նշանակում պատուաւոր անդամ դառնալ. մի՞թէ Մելիք-Հայկազեանը պատուաւոր անդամ դառնալու համար է հանրութեան օգտին աշխատել։

Բան գործողը հրապարակական ցոյցերով չպիտի կերակրուի. նրա կրակը պիտի ներսից լինի. նրան վարձատրողը պիտի իւր խղճմտանքը լինի։

Այն մարդիկ, որոնք իրենց ժամանակակիցներից են փառք ինդրում, նրանք փոքր մարդիկ են, հետեւապէս և չեն կարող մեծ գործեր կատարել։ Մեր խօսքերը Մելիք-Հայկազեանին չեն վերաբերում, որը գուցէ չի էլ իմանում, թէ իրեն մասին ինչ են խօսել։

Ա. Ագապեան.

ԱՐՀԵՍՏ Է ՄԵԶ ՀԱՐԿԱՒՈՐ

(«Նոր-Դար»-ին Աւստրիայից)

—

Երկու տարուց ի վեր է, որ գտնում եմ օտարութեան մէջ. դեռ պատանեկութեանս ժամանակին ցանկանում էի գնալ օտար երկրները, տարբեր ազգեր ու ժողովուրդներ տեսնել, ծանօթանալ նրանց կեանքի և սովորութեանց հետ։ Ահա եղաւ ինձ տեսնելու այս ամենը և պիտի խոստովանեմ, որ օրէցօր հաստատւում եմ այն կարծիքի մէջ թէ մենք արեւմտեան ազգերից շատ բան ունինք սովորելու, օրինակելու։

Մենք հայերս միշտ աշխատել ենք դիմել դէպի լուսաւորութիւն։ Հին ժամանակներից մինչև այս օրերս պահել ենք այն բարի սովորութիւնը, որ ուսանողներ ենք ղրկել օտար երկրներ, որպէս զի գնան սովորեն, կատարելագործուեն և գիտական պաշարով հայրենիք վերադառնան ուրիշներին հասրաժին հանելու։ Պատմութիւնը ցոյց է տալիս, որ մենք հինգերորդ դարու մէջ առողջ, ուժեղ պատանիներ ունէինք Յունաստանում, Ասորիքում ու Եգիպտոսում – այդ համեմատաբար այն ժամանակի ծաղկած երկրներում, և այդ պատանիներն էին մեր ազգի նշանաւոր փիլիսոփաները, պատմաբանները ու վարդապետները, վերջապէս դրանց ենք պարտական մեր հին գրաբար լեզուի մեզ աւանդմունքն իրենց թարգմանութեամբ և ինքնուրոյն ընտիր գրուածներով, իսկ այժմ մեր ուսանողների թիւն օրէցօր չատանում է և ուրախալի երեւոյթն այն է, որ անհրաժեշտ պէսք է դարձած գիտութիւն և արհեստ մշակելը։ Եւրոպայի մեծ և փոքր քաղաքներում ցրուած են մեր հայ ուսանողները զանազան մասնագիտութեամբ պարապելով. մեծ է նրանց պարտականութիւնը, նրանք պիտի վերադառնան և առաջնորդեն իրենց հայրենի ժողովրդին կեանքի կռիւը մղելու։

Ահա վաղուց է, որ երկաթուղին ու շոգենաւը մեզ ևս այցելեցին և դրանց յաջորդեց առևտրի արագ շարժումը. կեանքի կռիւն սաստկանում է, պէսք է պատրաստ լինել։ Արհեստը գլխաւոր տեղն է բռնում, պիտի աշխատենք, որ որչափ կարելի է շուտ իրացնենք։ Իւրաքանչիւր հօր սրբազան պարտականութիւնն է իւր որդու ապագան հոգալ. այլ ևս դժուար է նախկին նահապետական ձևով, մի փոքրիկ գործով ու հին ժառանգութիւնից մնացած կալուածների հասոյթով գոհանալ. ոչ, ժամանակին պիտի յարմարել։

Իւրաքանչիւր երկրի զարգացման նըշանը եղել են գործարանները—արհեստի այդ սրտրանները։ Ով որ մի եւրոպական արհեստական քաղաք տեսել է, դադափար ունի թէ ինչպէս մարդիկ մեծ գործերի են ձեռնարկում։ Վերջին դարուս մէջ փոքրիկ արհեստանոցներին փոխարինեցին հսկայ գործարանները, որոնց պարտական են երկրները իրենց զարգացումն ու պետութիւնները՝ իրենց հարստութիւնը։

Մինչև այժմ մեր ուսանողները գնում էին Եւրոպա բարձրագոյն ուսում ու կըրթութիւն ստանալու։ Այս երեւոյթը շատ գովելի է և մխիթարական. մասամբ պատրաստւում են բժշկութեան, լեզուագիտութեան, մանկավարժութեան, իրաւաբանութիւն համար և այլն, բայց շատ քչերն և հազիւ միքանի բացառութիւններ են, որ իրենց մասնաճիւղ ընտրած են արհեստի պետութիւնները, օրինակ մեքենագիտութիւն, տարբալուծութիւն, ճարտարապետութիւն, երկրագործութիւն և այլն։ Առածն ասում է, «Արհեստը ձեռքի ապարանջանն է» և իրաւամբ, այն հայրերն, որոնք ուզում են իրենց զաւակներին գործնական մարդիկ պատրաստել, նրանց միջնակարգ ուսում ու եւրոպական լեզուի հիմունքները աւանդելուց յետոյ թող ուղարկեն Եւրոպայի մի որ և է երկիր, ուր երեք-չորս տարի պատրաստուելուց յետոյ պիտի կարողանան ինքնագլուխ աշխատել, ապրուստ ճարել և կամ, եթէ միջոցները կըներեն, մեծ գործերի ձեռնարկել։ Մի արհեստագիտական դպրոց պարունակում է երեք կամ չորս տարուայ ծրագիր, բայց մասնագիտութիւններից աւանդւում են նաև երկրորդական գիտութիւններ իբրև ընդհանուր դարպասման անհրաժեշտ մաս։

Միջնակարգ դպրոց յաճախողի համար կեանքը տարբերւում է ըստ երկրի ու քաղաքի դիրքի և բազմամարդութեան. բայց կարելի է միջին հաշուով ասել, չափաւոր կեանք վարելու համար ամսական 40—50 ռուբլի բաւական է, որ հայ բարեկիցիկ վաճառականի կամ ագարակապետի համար շատ մեծ դումար չի կազմիլ։

Արհեստագիտական դպրոցները կարող են լինել պետական կամ քաղաքային և մասնաւոր. առաջին տեսակի հաստատութիւնների մուտքը դժուար է օտարերկրացիների համար, իսկ վերջին տեսակի մէջ մտնելու համար քննութիւնները մեղմ են, բայց վճարումը շատ է։ Ուսարիայում 20-ից աւելի պետական արհեստագիտական դպրոցներ կան, որոնք խիստ պահանջելի են և ամեն տարի դասարանները աշակերտներով լիքն են։ Գերմանիայում յիշեալ երեք տեսակ հաստատութիւնները մրցում են իրար հետ։

Այսպէս ինձ տպիլ եղաւ անձամբ տեսնելու Սաքսոնիայի Քեմնիցի և Լայպցիգի ճանապարհի վրայ, գեղեցիկ դիրք ունի. դպրոցն, որին քաղաքն իւր անունը մասամբ պարտական է, միայն մէկ անձի տեսչականութիւն է և առևտրի միակ ազդիւրը. աշակերտների թիւը տարեր տիրող հարիւրից պակաս չէ եղած։ Այդքան աշակերտների մէջ գտնւում են ամեն երկրացիներ ու ամեն կրօնի պատկանող երիտասարդներ. աչքի է ընկնում ռուսահատանցիների թիւը, որ մինչև 160-ի է հասնում. այդտեղ կարող էք գտնել ամեն հասակի մարդիկ 17—50 տարեկան. շատերը նոր են սկսել իրենց մասնագիտութիւնն ընտրել, իսկ ոմանք արդէն երկար ժամանակ գործնական մեքենագիտութեամբ կամ արհեստագործութեամբ զբաղուելուց յետոյ տեսականն են մշակում։ Այդտեղ կարելի է գտնել ապագայ ճարպիկ մեքենագէտներ, արհեստանոցի պետեր, գործարանատէրեր, երիքարազէտներ և այլն։

Ընթերցող հասարակութեանը մանրամասնութիւններ հաղորդելը թերթի սահմանից դուրս է, բայց աւելորդ չենք համարում յիշել, որ կարելի է դպրոցի ծրագիրն ու ընդունելութեան պայմանները ձրի ստանալ և ցանկացողները թող դիմեն հետեւեալ հասցէին (Technikum Mittveid i/s). Թղթակցութիւնը, բացի գերմաներէնից, կարելի է նաև ֆրանսերէն և անգլիերէն լեզուով գրել։

Ցանկալի է յուսալ, թէ այսուհետև մեր ուսանողները պիտի հետեւեն նաև արհեստի և արհեստական գիտութեանց և դրանով մեծ գործ պիտի տան մեր յառաջադիմութեան նպատակի իրագործմանը։

Ս. Ա.

Վիեննա, 7 մարտի (Ն. տ.)

ՔՐՈՆԻԿՈՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ.—Ձեզ արդէն յայտնի է, որ վանքի բակի մէջ գտնուող ժառանգաւորաց հին դպրոցը սկսած դեռ աշնանից քանդում էին։

Մարտի 3-ին բանուոր մշակները հասնելով այն մասին, որ մի ժամանակ Փիլիպպոս կաթողիկոսի վեհարանն է եղել և միևնոյն ժամանակը պարունակում էր իւր մէջ սեղանատուն, գրադարան և այլն, յանկարծ գտնում են ահագին քանակութեամբ երկաթ, պղինձ և ուրիշ շատ հնութիւններ։ Ահագին քանակութեամբ եմ ասում նրա համար, որ դուրս եկած պղնձի «մարթապանները» կոչուած ամանները հարիւրներով կարելի է հաշուել. դեռ չեմ ասում այն ահագին կաթսան իւր կապարչով, հասատ չղթաները, թիթեղեայ լապտերները, պղընձի կոնքիկը, ալթաւանները և այլն և այլն...

Հետաքրքիր էր տեսնել. մինչդեռ մի կողմից վանքի միաբանութիւնը շրջապատած, հնութիւնները դիտում էր, միւս կողմից մշակները գործեալ բիլում և դարսում էին։

Ինչպէս կաթսայի, նոյնպէս և հնութիւններից շատերի վրայ եղած արձանագրութիւններից երեւում է, որ մօտ 300 տարուայ հնութիւններ են։

Մինչև այժմ էլ, երբ այս տողերը գրում եմ, մշակները քանդում և հանում են. ասում են դեռ վաղն էլ կըշարունակուի, գուցէ աւելի թանկագին հնութիւններ դուրս գան։

—

Վաղը, մարտի 10-ին, քաղաքային վարչութեան նախաձեռնութեամբ Վանքի առաջ եկեղեցում մատուցուելիք հանդիսաւոր պատարագից յետոյ, հոգեհանգիստ է կատարուելու Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ Պօղոս Իգմայիլեանի գերեզմանի վրայ նրա մահուան տարելից առթիւ։ Խօսք չկայ, որ ներկայ կըլինի ահագին բազմութիւն։

Թերեքի շրջանում և այլ տեղեր։ Կամ լոկ ակցիոներական ընկերութիւններ կազմուէին և այս կամ այն գիւղատնտեսական ճիւղը զարգացնէին։

Մենք հաւատացած ենք, որ եթէ փոքրիկ լուրջ վերաբերուեն այս խնդրին թէ քաղաքացիք, որ փողով վայելում են գիւղացու քրտնքի վաստակը, թէ մեր գիւղատնտեսները, որոնք տեսլի հանդստութիւն են սիրում, քան իրենց պլեսացաւանք ասլ, թէ մեր կալուածատէրերը, վանական կառավարութիւնները, որոնք սիրում են առնել՝ առանց տալու, հնձել առանց սերմանելու, և վերջապէս իրենք՝ գիւղացի համայնքները, այն ժամանակ մի տասնեակ տարում կերպարանափոխութիւն կըստանար մեր գիւղատնտեսական խարխուլ վիճակը և մեր գիւղատնտեսական դրութիւնը։

Կ. Կ. Մելիք-Շահնազար.

սած, բերանը ապանձուած հունձը հնձէ, խուրձեր դնէ, կալսէ, քամու տայ անոնոց համար խոտ ու դարման պատրաստէ, ջրատաց դնայ, այգու բանջարանոցի հոգսը քաշէ, անասուն դնայ, գործիք չինէ, համայնքի վրայ արուած տէրունական կալուածատիրոջ պարտաւորութիւնները կատարէ, տան հոգսը քաշէ, ամեն մի դատարկ գործի կամ վէճի համար իրեն վկայ քաղաք գնայ դատաստանատների չէմքերը մաշէ, մի խօսքով մեքենայի պէս ամբողջ տարին պրատայա գայ և դեռ իւր քրտինքով վաստակած մի կոպէկ հայից բաժին հանէ ագքատին, աշուղին, տէրտէրին, նախըրջան, գպրին, խոջային, հոդատիրոջ ու պարտատիրոջ։

Դեռ հազար փառք, որ այդպիսի գըժուարութիւններով կարողանում է գիւղացին իւր աշխատանքին տէր դառնալ. յաճախ հակառակն է պատահում,—կարկուտ, մորեխ, խոշակ, մուկ, ցրը—ահաւորութիւն, հեղեղ գալով՝ փչացնում են նրա ջանքերը, փշրում նրա յոյսերը. և երբ միքանի տարի չարունակում են նոյն անյաջողութիւնները և պարտատէրը դուռը կոտրելով, բեռնդը է կապտում այնտեղից, ուր մտել է դատարկ ձեռով, առատ հունձ ժողովում, ուր ոչ վարիլ է և ոչ սերմանել, այն ժամանակ մնաս բարեաւ ալեծածան հասկեր, ոսկի հանդեր, մարմանդ արօտներ, իւր աշխատութիւնը բաժանող եզ ու գոմշուկներ։ Մնաս բարեաւ է ասում գիւղական թարմ և աշխատող տարրը իւր ընտանիքին, ընկերին, բարեկամին, սարին ու ձորին և ախ ու հառաչով դիմում պանդխտութեան, դարձեալ ատժանակիր աշխատութեամբ մի կոպէկ հաց ճարելու։

Իսկ մենք, հասկացողներս հանգիստ նստած քաղաքներում, ամեն օր սովոր ենք հրապարակաւ գիւղացուն դատապարտելու, որ նա ծոյլ է, որ նա յետ է մնացել, նահապետական ձեով է տանում իւր գիւղատնտեսութիւնը, որ ուզում է այն, ինչ որ իւր խելքն է կարում, իւր միտքը ըմբռնում, որ պէսք է լաւացնել, բարւոքել նրա անտեսական վիճակը և այլն, և այլն սովորական խօսքեր ու դարձուածները, որոնք ի հարկէ ոչ մի լաւ հետեւանքի չեն հասցնում, և այդ պարզ է, քանի որ քաղցած մարդին բառական չէ հացի կամ մսի աննդարար յժի մասին ճառելը, այլ պէսք է գործնական ճանապարհ ցոյց տալ, թէ որտեղից և ինչ միջոցներով կարելի է այդ հացը կամ միսը ձեռք բերել։

Մեր գիւղացին այսօր քաղցածութեան վտանգին է ենթարկուած. ով պէսք է նրան ուղիղ ճանապարհը ցոյց տայ, ով պէսք է նրա դժան աշխատանքը թեթեւացնէ։

Արդեօք ժամանակը չէ՞, որ Ռուսիայում և արտասահմանում ուսած գիւղատնտեսները մի բարոյական կապ հաստատէին իրենց մէջ և մի գիւղատնտեսական շաբաթաթերթ կամ ամսաթերթ հրատարակէին ժողովրդին մատչելի լեզուով և գործնական ուղղութեամբ. կամ գոնէ տարին միքանի ժողովածուներ լոյս ընծայէին և աժան գնով տարածէին գիւղատնտեսական շրջաններում։

Արդեօք ժամանակը չէ՞, որ մեր գիւղատնտեսական այս ու այն կեդրոններում խնդրամատոյց լինէին փորձնական կայարաններ հիմնելու, որով խօսքի հետ փորձն ու գործը համընթաց գնալով՝ աւելի հեշտութեամբ կրնարածուէին ժողովրդի մէջ այդ գիտութիւնները, քան այլ միջոցներով։

Արդեօք ժամանակը չէ՞, ինչպէս անցեալները «Նոր-Դար»-ը շատ ճիշտ նկատել էր, որ մեր այն վանքերը, որոնք ընդարձակ կալուածներ ունին թէ իրենց շահերը պաշտպանելու և թէ ժողովրդին բարի օրինակ ցոյց տալու համար, մասնագէտներ պահէին։

Արդեօք ժամանակը չէ՞, որ թէ նոյն իսկ գիւղական համայնքները այդպիսի մասնագէտներ պահէին, ինչպէս այդ կայ

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ. - Մ. ամսվ. 3-ին, ...

...

...

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ

(«Նոր-Դար»-ի թղթակիցը)։

Мартъ

ՓԵՏՐՎԱՐ, 26 փետրվարի։

«Նոր-Դար»-ի նախորդ թվերից մեկի մեջ տեղեկացրինք մեր ընթերցողներին Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաստատված հարաբերությունների մասին։ Հայտնի է, որ միջոցներ են ձեռնարկվում, որպեսզի Ռուսաստանի հպատակ հայերը ազատ և անարգել կարողանան գալ Թուրքիայի տարբեր քաղաքները, որտեղ նրանք ունեն իրենց գործերը։ Ֆինանսների նախարարությունը հրամայել է, որպեսզի Ռուսաստանի հպատակ հայերը, որոնք Թուրքիայում ունեն իրենց գործերը, ազատ և անարգել կերպով կարողանան գալ Ռուսաստան